# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ապրիլի 2013 թվական N 126-Ա

ք. Հրազդան

## ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով «Սերժ» և «Կանի Լիճ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների 2013 թվականի ապրիլի 2-ի և 3-ի գրությունները՝ ***որոշում եմ***.

1. Մինչև նոր մրցույթի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը՝ Աբովյան-Կապուտան-Ջովաշեն միկրոավտոբուսային երթուղին հանձնել «Սերժ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ժամանակավոր սպասարկմանը, իսկ Աբովյան-Ջրաբեր միկրոավտոբուսային երթուղին՝ «Կանի Լիճ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ժամանակավոր սպասարկմանը:

2. Ներմարզային երթուղիների մրցութային հանձնաժողովին՝ սահմանված կարգով իրականացնել ավտոբուսների վիճակի գնահատում և համապատասխանության դեպքում թույլատրել շահագործելու երթուղում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ